№ 1 ՅՈՒՆԻՍ 1895

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1894–1895

1894 թ. հայկական յեղափոխական կեանքի դարաշրջանն է կազմում. նա նշանաւոր և հարուստ է թէ ոգով, թէ իւր տուած հերոսական զոհերով և թէ այն բարձր ոգևորութեամբ, որով բռնուած է այսօր համայն հայութիւնը. նա, հայութիւնը, այսօր մի մարմնացած յեղափոխութիւն է: Հայ յեղափոխական կեանքը իւր 30 տարուայ գոյութեան ընթացքում երբէք չի տեսել այսքան շատ, այսպիսի մեծ զոհեր և չի տեսել այսպիսի ընդհանուր ժողովրդական ոգևորութիւն, համակրութիւն ու շարժում: 1894 թ. ամենափայլունն է մեր յեղափոխական կեանքում թէ իւր որակութեամբ և թէ իւր ծաւալով:

1894 թ. էր, որ ժողովրդի հաբազատ քաջ զաւակը՝ Ցակոբը փորձ փորձեց սպանել սեանուն Աշըգեանին: Աշըգեանը եթէ այսօր չկայ, եթէ նա մեզ համար մեռած է, այդ շնորհիւ Ցակոբի էր. այդ փառքը նրանն է, նրա ինքնուրոյն գործունէութեանը. այդ գործը նրա ազնիւ սրտի պահանջն ու արձագանքն էր և ոչ ոք չի կարող խլել նրանից այդ և ուրիշ անուան տակ դնել. նրա բազմաչարչար ոսկորները կը բողոքեն դրա դէմ. Հնչակեանների անյաջող փորձն սպանելու Սիմոն պէյին, Մարգարի և Ծիրայրի հերոսաբար, յանուն ժողովրդական շահերի կախաղան բարձրանալը, ժողովրդի, հալածեալի ու տանջուածների պաշտպանների՝ հայդուկային խմբերի տաճկա-ռուսական սահմանագլխի և Վասպուրականի ընդհարումը Թշնամու հետ, Մուշի և Եւդոկիայի անամօթ և անխիղճ կոտորածը և բոլորի պսակ՝ Սասունի հերոսական կռիւը, կռիւ որ իսկապէս մի պատերազմի էր նմանում: Դեռ մի կողմն ենք թողնում այն անընդհատ, ամեն քայլափոխում պատահած ընդհարումները, որ տեղի են ունենում կառավարութեան և ժողովրդի, քրդերի և հայերի մէջ. այն ամենօրեայ կրկնուող բազմաթիւ թալանները, առևանգութիւնները, անպատուութիւնները, կողոպուտները, սպանութիւնները, հրդեհները և այլն: Այս բոլորի ամբողջութիւնը, որ մենք խոշոր գծերով դրինք այստեղ, տալիս է 94 թուականի յեղափոխական կեանքի պատկերը. թէև տխուր, վշտացուցիչ է, որովհետև միշտ արիւն է հոսում, բայց ոգևորող և խրախուսիչ է, որովհետև ազատութիւնը այդ է պահանջում.....

Բայց ինչ կը տայ մեզ 1895 թուականը:

Հարկաւոր չէ մարգարէ լինել դուշակութիւններ անելու համար: Ով որ ծանօթ է պատմութեան և մարդկային կեանքի օրէնքներին, նրա համար շատ պարզ է. կը լինի նոյնը ինչ որ 94 թ. միայն, յոյս ունենք, աւելի ուժեղ, աւելի խիստ կերպով և միևնոյն ժամանակ աւելի տակտիկայով: Այլապէս չի կարող լինել, որովհետև նա զարգանում, աճում է և դրա հետ միասին նա ձեռք է բերում փորձառութիւն: Բացի այս՝ մեր յեղափոխական կեանքն այսօր դրուած է այնպիսի պայմանների մէջ, նա զարգացման այն աստիճանի է հասել, որ բնականաբար տեղի են ունենալու աւելի խոշոր դէպքեր. այդպէս է նրա ընթացքը և այլապէս էլ լինել անհնարին է: Մենք համոզուած ենք, որ ոչ ոք չի կարող կանգնեցնել կամ փոխել հայկական կեանքի յեղափոխութիւնը: Մինչև նա չհասնի իր նպատակին՝ ազատութեան, փորձերն ու ճիգերն ապարդիւն կանցնին կեանքի երկաթի օրէնքի առաջ: Սրա վրայ աւելացրէք և այն, որ դարերի ստրկական կեանքի դառն փորձերը մի կողմից, 30 տարուայ անընդհատ, թէև թոյլ կռիւը միւս կողմից, համոզել է ժողովրդին, որ իր ազատման միակ ելքը, միջոցը յեղափոխութիւնն է: Եւ ահա համոզուած հայ յեղափոխականներին հարկաւոր էր և այս՝— որ ժողովուրդը ոչ մի յոյս չդնի կառավարութեան վրայ, որ բոլոր չարիքների աղբիւրն է, այլ իր ներքին, սեփական ուժերի, որ իրեն փրկողը, ազատողն ինքն է լինելու հրի և սրի միջոցով, մեծաքանակ զոհերով: Հայ յեղափոխականը հասած լինելով այդ կէտին (որ անհրաժեշտ էր) և լաւ հասկանալով, որ միտքը կեանքի ուժեղ ֆակտորներից մէկն է, որ նրա դերը մեծ է, կը կրկնապատկէ իր գործու-

[illegible] գամը չէ, որ [illegible] քաշուում են նրա վիճակով, բայց [illegible] յուսիթեան—հատոր անհրաժեշտ պայմաններ են, որովհետ-

նէութիւնը, մի կողմից շարունակելով իր պրոպագանդան ու ագիտացիան, միւս կողմից հարուածներ տալով կառավարութեան՝ մղելով անընդհատ կռիւ, միշտ ու միշտ աւելացնելով, բազմացնելով առաքեալների թիւը: Այս բոլորը՝ հայ յեղափոխականի գործունէութիւնը, ժողովրդի համոզմունքը, ներկայ տիրող պայմանները և կեանքի օրէնքներն առհաւատչեայ են, որ 1894 թ. հետևող թուականները յեղափոխական տեսակէտից կը լինեն աւելի եռանդուն, աւելի ուժեղ, աւելի հարուստ:

Այսպիսի դրական օրէնքների ու փաստերի վրայ հիմնուած մեծ՝ յոյսերով ենք մտնում 1895 թ. Մենք յոյս ունենք, որ կունենանք դարձեալ այնպիսի կռիւ, ինչպէս Սասունինն էր: Յետ նահանջել մենք չենք կարող և ոչ մի պայմանով էլ չպէտք է նահանջել, մինչև թշնամին զինաթափ չլինի, մինչև նա ենկճւի ժողովրդեան պահանջի առջև: Մենք այս ասում ենք վստահութեամբ, մեզ հետ ունենալով նրա կուելու եռանդը: Այլ անցան, գնացին այն օրերը, երբ հայ ժողովուրդը փախչում, վախենում էր զոհերից, արիւնից: Նա ոչ միայն վարժւել է դրանում, այլ, կրկնում ենք, համոզւել է, որ այդպէս է հարկաւոր, որ այդ է միակ ճանապարհը: Այսպիսի համոզմունքով ու վստահութեամբ նա Սասունի կռւով բացարձակ կռիւ յայտնեց սուլթանի կառավարութեան, դրանով կտրեց իր բոլոր յարաբերութիւնները և իբրև թշնամի նրա առաջը դուրս եկաւ. հաշտութիւնն այլ ևս անհնարին է և նա ոչ փնտրում և ոչ հայցում է: Սասունի կռւով ժողովուրդը դրական ձևով դրեց կառավարութեան առջև՝ մահ, կամ ազատութիւն. իսկ կառավարութիւնը դրա դիմացը դրել է՝ կամ կոտորած, կամ կատարեալ ընկճում. որոշումներ, որ ոչ մի պայմանով չեն կարող հաշտւել: Ո՞րը կը յաղթի...

Երկու թշնամի բանակները եռանդով առաջ են տանում իրենց գործունէութիւնը. ժողովուրդն ընդդիմադրում, ապստամբւում է. կառավարութիւնը կոտորում, աշխատում է ընկճել, ինչպէս Սասունին արաւ: Ո՞վ կը յաղթի.—Նա՛, ասել ենք մենք արդէն, ով բարոյապէս բարձր է: Հակառակորդ ուժերը հաւասար չեն. ինչ կասկած, որ կառավարութիւնն ուժեղ է և դեռ մի քանի Սասունի կռւի պէս կռիւներում կը կոտորի: Բայց կոտորել չի նշանակում յաղթել: Ո՛չ, հայ ժողովուրդը չի յաղթւել և չի յաղթւիլ. չի յաղթւել, որովհետև զէնքը վար չի դրել, որովհետև թշնամին դեռ չի կարողացել խլել նրանից ապստամբական արնագոյն դրօշակը, որ նա բարձր և ուժեղ բռնել է, որը ծածանւում է Հայաստանի ամեն մի անկիւնում. չի յաղթւիլ, որովհետև ուժեղ է այն ձեռը որ բռնած ունի այդ դրօշակը և Սուլթանի կառավարութեան պէս անամօթ, ստոր ու վախկոտ կառավարութիւնը չի կարող իւր անմաքուր ձեռներով մօտենալ և խլել այդ անարատ դրօշակը և անպատւել, պղծել նրան: Ո՛չ, այդ դրօշակը չի ընկնիլ մինչև յետին հայի վերջին շունչը: Մի՛միայն երբ Սուլթանի կառավարութիւնը հպարտութեամբ կարող կը լինի ասել՝ այլ ևս Հայաստանում հայ չկայ, երբ նա կը տեսնի իւր ոտերի տակ ածուած դիակներ և արիւնլայ աւերակներ, այն ժամանակ նա յաղթող կը լինի և միայն այն ժամանակ անարատ դրօշակը կը պղծի... Բայց քանի կայ, քանի ապրում է հայ ժողովուրդը, կայ և ապստամբական դրօշակը, կայ և հերոսական կռիւը:

Եւ այդ կռիւը, որ այսօր աւելի լարուած բնաւորութիւն է ստացել, կը շարունակւի. նա մի րոպէ, մի վարկեան անգամ կանգ չի առնի, մինչև որ ժողովուրդն իր նպատակին չհասնի, մինչև Հայաստանի հողի վրայ ապրող ժողովրդների վզին ծանրացող լուծը չջարդւի և նրա տեղը չբռնի ազատութիւնն ու եղբայրութիւնը, խաղաղ, ապահով կեանքն ու աշխատանքի արդար վայելումը: Այդ են պահանջում իւր կեանքը, իւր մարդկային իրաւունքները, այդ են պահանջում և իւր հազարաւոր նահատակների ոգին ու արիւնը, որոնք ընկել են քաջաբար, որոնք հարթել են ճանապարհը, որոնց յիշատակը վառ պահելու համար, պարտաւոր ենք այդ օրն իբրև Մեծ-Տօն տօնել: Եւ մի՞թէ մենք կարող ենք չգնալ այդ ճանապարհով, որ միակն է և որը մեզ տանում է դէպի մեր նպատակը, որքան էլ նա ծանր, դժւար և փշոտ լինի:

Չէ՛, մենք կերթանք այն ճանապարհով, որով գնացել են յեղափոխական ժողովրդի ուսուցիչները՝ Սասունցիք: Այո՛, Սասունը յեղափոխական ժողովրդի ուսուցիչն է, որովհետև այդ առաջին անգամը չէ, որ նա ապստամբական դրօշակ է բարձրացնում,—այդ գիտէ իւրաքանչիւր հայ. նա ապստամբւել է ոչ թէ միայն մի քանի անգամ, այլ նա միշտ անընդհատ կռւի մէջ է եղել կառավարութեան հետ և մինչև իր ընկնելը կիսաանկախ դիրք է ունեցել: Եւ ո՞վ կը յանդգնի ասել, թէ Սասունի ապստամբութիւնը սրա կամ նրա գործն է. ո՛չ ոք... այդ կը նշանակէ անպատւել հայ յեղափոխական ժողովրդի ուսուցչին՝ Սասունին, այն Սասունին, որի անունը շատ վաղուց է, որ սիրելի է տանջւող ժողովրդին, որի յոյսերի աղբիւրն է: Մենք կերթանք այդ ճանապարհով, մեզ հետ ունենալով այն բարձր յոյսը, որ մենք կը յաղթենք: Եւ մենք կը յաղթենք: Մենք կերթանք այդ ճանապարհով, որովհետև մենք ուզում ենք ապրել, բայց ոչ այնպէս, ինչպէս ապրել ենք դարերով՝ ստրուկ, կեղեքւած, անպատւած, հալածւած, ստորացած... Այս կուելու գիտակցութիւնը, որ այժմ յատուկ է ոչ միայն համոզւած յեղափոխական-

ներին, այլ և մտել է ժողովրդի բոլոր խաւերը, մեզ առհաւատչեայ է, որ սկսածը կը շարունակի, որ մենք կը գնանք նոյն ճանապարհով, մի բոպէ անգամ չշեղուելով և հաւատարիմ մնալով մեր սկզբունքին և նրանց, որոնք զոհել են իրենց, նահատակուել են ժողովրդի համար ապագայ սերնդի համար։

Մենք մտնում ենք 1895 թ. թէև սգաւոր, տուած լինելով հազարաւոր զոհեր, բայց փառաւոր անցեալով և ապագայի մեծ յոյսերով։

Մենք մտնում ենք 1895 թ. տխուր, բայց եռանդով, որ ներշնչել են մեզ նոյն իսկ այդ հազարաւոր զոհերը։

Մենք մտնում ենք 1895 թ. մեայլ դէմքով, բայց ոչ ջարդուած, փշրուած սրտով։

Մենք մտնում ենք 1895 թ. հազարաւոր ընտանիքների լաց ու կոծով. լաց, որ ոչ թէ գթութիւն է հայցում, այլ վրէժ է պահանջում, որ բողոքում է անլսելի գազանութիւնների դէմ և արդարութիւն է պահանջում. արդարութիւն ոչ թէ օտարի ձեռքից, այլ իր հարազատից, իր եղբօրից։

Մենք մտնում ենք 1895 թ. հազարաւոր եղբայրների և քոյրերի հետ քաղցած, մերկ ու ոտաբոբիկ, որ պատճառել է թշնամին։

Մենք մտնում ենք 1895 թ., մեր առջև ունենալով հազարաւոր գիակներ և աւերակ դարձած երկիր։

Եւ այս բոլորը մեզնից, ժողովրդից պահանջում է վրէժ։

Ժողովո՛ւրդ, քո քոյրերը և եղբայրները, քո որբերը քեզնից պահանջում են և՛ օգնութիւն, և՛ վրէժ թշնամին ոչինչ չի խնայում, այդ դու լաւ ես տեսնում և մի՞թէ այսօր ևս դու կը շարունակես քո նախկին թուլութիւնը, չես լսիլ այն ձայները, որոնք միշտ բղաւում էին, թէ կոտորում են, կռւում են...

Ո՛չ, մենք ուզում ենք հաւատալ, որ դու այլ ևս չես մերժիլ օգնութեան ձեռք կարկառելու քո թշւառ եղբօրը, որովհետև նա քեզ ցոյց տուեց, որ գիտէ կռուել, որովհետև այդպէս է պահանջում քո պատիւը։ Ո՛չ, մենք ուզում ենք հաւատալ, որ դու ձեռք կը տաս եղբօրդ, որպէս զի նրա բարձրացրած ապստամբական դրօշակը չանպատուի, որ նա ծածանուի մինչև Հայաստանի և նրա ժողովրդների կատարեալ ազատումը։

Եղբայրներդ վճռել են կամ՝ ձեռք բերել ազատութիւն, կամ թշնամուն տալ ածխացած դիակներ և արիւնոտ աւերակներ։ Մի՞թէ դու կարող ես անտարբեր մնալ.— Ո՛չ։

Եւ մենք մտնում ենք 1895 թ. մեծ յոյսերով՝ խրախուսած և ոգևորուած։

Կեցցէ՛ ժողովուրդ, կեցցէ՛ յեղափոխութիւն։

ՍԱՍՈՒՆԻ ԿՌԻՒԸ

I

Սասնոյ մէջ պատահած եղեռն դէպքերու տեղեկութիւններ.—

Շէնիք Սասնոյ մի գաւառն է. ունի 4 գիւղ՝ Շէնիք, Մզրէ-Սօրք, Գուռճոք, և Տարի։ Շէնիքու այս 4 գիւղերու հայերուց սպանուածներն են 950 հոգի, թէ այր, թէ կին, և թէ երեխայ, որոնց 920 Շէնիքու են և մնացեալ 330 միւս գիւղերէ են։ Այս թշւառներէ շատեր Երզնկայու Մուշուր փաշայի հրամանաւ ողջ ողջ քարերէն վար նետելով սպանեցին, շատերն ալ ողջ ողջ թաղեցին, իսկ մնացած մասը սրէ անցուցին, գիւղերը այրելով մոխիր դարձուցին։ Իսկ ողջ մնացողներ նօթի, սովալլուկ Մշոյ-Դաշտի գիւղեր կը պտտին։

Շէնիքու Տէր-Յովհաննէս 140 հոգով գնաց Օսմանցուի բանակ Մուշուրին անձնատուր եղաւ. Մուշուր հրաման ըրաւ իր զօրքերուն Տէր-Յովաննէս քահանայի հետ մէկ տեղ այդ թշւառներէ մի քանիսին կապեցին և ողջ ողջ քերթեցին, իսկ մնացածներէն մաս մը ողջ ողջ թաղեցին, իսկ մնացեալին զօրքերուն հրաման ըրաւ սուրերով կոտորել։ Շէնիք գիւղի եկեղեցոյ մէջ փեցած շներ տարին թաղեցին. այսպէս անարգանօք կը կատակէին մեր սրբավայրեր։

Ալեան, որ Սասնոյ մէկ գաւառն է, կը բաղկանայ 14 գիւղերէ։ Երբ կռիւ սկսաւ Հայ գիւղի վրայ, տաճկաց ամբողջ զինուորութիւնն այդտեղ հաւաքուեցաւ։ Երզնկու Մուշուր փաշան 30-ի չափ թնդանօթով, 24 գունտ հետեւակ և հեծեալ զօրքերով այդ գաւառի 14 գիւղերու դէմ պատերազմ մղեց. Այդ գիւղերու հայեր Հայ գիւղի անառիկ տեղեր ապաստանելով՝ դէմ դրին 25 օր։ Տաճիկ զօրքեր որչափ որ թնդանօթով կը ռմբակոծէին այդ անառիկ տեղը, ոչինչ օգուտ չէր ըներ։ Երբ հայերու կերակուր և զէնքի պաշարը հատաւ, սկսեցին ցիր ու ցան իջնել. այդ ատեն տաճիկ զօրքեր սկսան հալածել հայերուն. կնիկներուն որովայններ ճեղքելով՝ զաւակներ կը հանէին, կը կոտրտէին, մարդիկ ողջ ողջ կը թաղէին. գիւղեր այրելով՝ մոխիր ըրին և այդ գիւղերն այրած ժամանակին կը հաւաքէին զմարդիկ, կը լցնէին տուներու մէջ և կայրէին։ Ամբողջ 40 օր այդ եղեռնագործութիւն ի գործ գրաւ։ Ալիանցիք կորուստ ունեցան 2000 հոգի՝ մարդ, կին, երեխայ։

Պատերազմ սկսուեց Գէլիէ-Կուզանայ վրայ։ Գէլիէ-Կուզան ունի 22 գիւղ։ Այդ գիւղերու բնակիչները լեռան գլխին ամրացան։ Անոնց դէմ ելնող զօրքերու թիւը 30,000 կը հասնէր, թէ քիւրդ, թէ համիտեայ և թէ կանոնաւոր զօրք, 50-ի չափ էլ թնդանօթ։ Ամբողջ քսան օր պատերազմեցան այդ երեսուն հազար խուժանի և յիսուն թնդանօթի դէմ։ Երբ Ալիանցիք յաղթուեցան, Գէլիէ-Կուզանցոցն ալ արդէն վառօդ և կերակուր հատած էր։ Գէլիէցին իր վերջին յուսահատական ճիգ այսպէս թափեց թշնամու վրայ. աչքի առաջ ունենալով հերոսական մահը, զէն ի ձեռին արձակում ըրաւ թշնամի բանակի վրայ և մեծ ջարդ տուեց։ Երբ

գաղը [illegible] ը դիակներ զբաղուում են նրա վիճակով, բայց [illegible] յուզեան համար անհրաժեշտ-պայմաններ են, որովհե-

թշնամու բանակ երթալով ստուարացաւ, գէլիէցիք ըսկսան խոյս տալ։ Այնտեղ Ալիանից Գանրոռու Նավալէ Մամքան գիւղացի Հեպօեան քաջարի Վարդան անուն անձը մէկ դաշոյնով քսանի չափ զօրք սպանեց և յետոյ ինքն ալ սուրնի հարուածներով սպանուաւ։

Գէլէնցին սկսաւ խոյս տալ և ցիր ու ցան իջնելտաճիկներ ետևէ ընկան, հալածեցին ու կոտորեցին։ Գէլէցոց կոտորածներու թիւը եղաւ 3,000 հոգի, թէ այր, թէ կին և թէ երեխայ։ Գէլէ-Կուզանցոց նորընծայ Պետրոս քահանայ խմբի գլուխ անցնելով՝ քաջաբար կը պատերազմէր։ Երբ խումբը կոտորուելով՝ ցիր ու ցան եղաւ, քսանի չափ զօրքեր յարձակեցան Տէր-Պետրոսի վրայ և սուրներով զարկին, սպանեցին և դիակը կտոր կտոր արին։

*
* *

Աղբէք գաւառ ունի ութ գիւղ, որք են՝ Վերին Աղբէք, Ներքին Աղբէք, Խտան, Մուտավար, Գոման, Խուխիք, Գալասազ և Զուրուփ։

Կռիւ երբ դարձաւ Դալորիկու կողմը, բոլոր Օսմանեան զօրքեր մտան այս գաւառի մէջ, ձեռք անցող սրէ անցուցին։ Փախնող ազատուան։ Շատերն ալ բռնեցին, լցին շէնքերու մէջն ու այրեցին։ Այրածներ չենք գիտեր որչափ են, միայն թէ 1200 հոգի կորած են. դիակներու բազմութիւն և մոխրի շատութիւն կը նշանակէ սպանուած կամ վառուածներու թիւը։

Այդ Աղբէք գաւառն աւերելէ զկնի Մուշուր փաշայի հրամանաւ բոլոր զօրքեր՝ թէ քիւրդ, թէ համիտեայ, թէ կանոնաւոր զօրքեր գումարուած, իրենց հետ ունենալով 80-ի չափ թնդանօթներ, յարձակում ըրին Դալորկայ վրայ, ուր Սասնոյ յեղափոխութեան կենտրոնն է։ Դալորկցիք իր շրջակայ 20 գիւղի բնակիչներով Մուրատի և Ալէքսանդրապօլցի Սենեքերիմի առաջնորդութեամբ Քրդ-Քրդ քարի վրայ ամրացան և ամբողջ տասն օր դէմ դրին տաճկին, նրա անչափ զօրութեան։ Մուշուր փաշան իր հնարագիտութեամբ գտաւ թոյլ դիրքը և սկսեց այդ կէտը թնդանօթներով ռմբակոծել։ Քրդ-Քրդ քարի վրայ ամրացածները սկսան ցիր ու ցան իջնել։ Տաճիկ զօրքերն սկսան զհայերը հալածել, ձեռի անցածները կոտորեցին, թաղերու մէջ մնացածները տուներուն մէջ փակեցին և անգթաբար այրեցին։

Դալորիկայ և իր շրջակայ գիւղերու կոտորածներու թիւ 5,000-ի կը մօտենայ՝ թէ ծեր, թէ երիտասարդ, թէ կին, թէ երեխայ։ Այդ թշուառներու դիակներ մինչև հիմա էլ առանց թաղելու մնացած են։

Ահա՛ այսպէս դարձած է այս ընդարձակ երկիր... Անթաղ մնացած դիակներու գարշահոտութենէն ամբողջ քառասուն օր անցնելն անկարելի էր այդ աւերակ դարձած գեղերէն...

Տալորիկու գիւղերու անուններն են. Հեթինք, Աւադառ, Նոնոյ, Տալորիկ, Էղկարդ, Ծորեր, Սպղանք, Միրկեր, Հունուտ, Փսրին, Թուալին, Հաքմանք, Հշաղին, Ռէնետ, Բաղսի-Կտոր, Իշխանձոր, Նորհան, Կալիի, Խզրիկ.

Ալիանցոց գեղերու անուններն են.—

Զայ, Վերիրմք, Ծարէ, Մերկէխոք, Ալիանցից-Գէլին, Բլօի գեղ, Կրվրէ-Արի, Բողնցի, Սէվրք, Նավալէ-Մամքան, Քօր, Բօնկէ Հովիտ, Նավալէ-Շանփէ, Գեռհասար։

Գելիէ-Կուզան գիւղերու անուններն են.—

Մերկեր, Վերի, Բլուր, Ամպրներ, Ճրոբզզկ, Գավրէ, Տալասև, Հաղմօգոմ, Զախք, Դահօլ, Գավրդին, Մզրէխասս, Նուսեենցիք, Հօսլ, Մզրէսան, Օմբեթար, Միհել նէն, Ղարիպլաէ, Դաղվանի, Աւեսխան, Գիլիէ-Կուզան։

Վերոյ գրած գաւառներու բոլոր գեղեր, որ անուանէ ականէ յիշած եմ, բոլորն ալ վառուած և մոխիր են դարձած, այդ գեղերու ողջ մնացողներ տակն հազար ժողովրդեան չափ փախած են Մշոյ դաշտի գեղերու մէջ ցրուած, մերկ ու սովալլուկ կը պտըտեն. ոչ ժողովուրդ կրնայ օգնութիւն ընել, ոչ ալ կառավարութիւն օգնութիւն կընէ, որովհետև մեր բոլոր երկիրներ թալանուած են. եթէ օգնութիւնը չը հասնէ՝ բոլորն ալ պիտի մեռնին ասոյանդական ու թափառական։

Տէրութիւն հրաման ըրած է, որ սասունցիք երթան իրենց տեղեր կրկին լեցնեն։ Բայց իզուր, որովհետև սասունցիք ապրուստի միջոց չունին, որ երթան լեցնեն իրենց երկիր. մեր եղբարք մեզ կարեկցեն ու օգնեն։ Օգնութեան ենք կարօտ։

— . —

II

(ՄԵՐ ԸՆԿԵՐՈՋ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

Խնուս

Դեռ հայերի և քրդերի անցեալ տարւայ կռիւ պատճառով, որի ժամանակ քրդերը սոսկալի հարուած ստացան, վրէժ է պահուած եղել հայերի և քրդերի մէջ։ Աւելի կատաղած են եղել հայերի դէմ բագրանցիք և բադկանցիք։

Սասնոյ հայերը կարծելով, որ այս տարի քիւրդերը վրէժ լուծելու համար պիտի բարձրանան Անտօք լեռը զօրան (մենք ասում ենք եայլաղ) դնելու, աճապարում են իրենք շուտով բարձրանալ վերոյիշեալ լեռը և ամուր դիրք բռնել։ Բացի այդ հայերը քանդում են Խիան գաւառի և Սասնոյ մէջ գտանուող Սև ջուր կոչուած գետի միակ կամուրջը, որպէսզի քիւրդերը չկարողանան մտնել Սասուն (Դալորիկի թաղերը)։

Հենց այս ժամանակներում պատահում են մի քանի անցքեր, որոնք դառնում են Սասնոյ կոտորածի անմիջական պատճառները։

Այս տարի գարնան սկզբից շէնիկցի հայեր գալիս են Մուշ, կարաւանի հետ միանում և ճանապարհ ընկնում դէպի Տիգրանակերտ ցորեն բերելու։ Կարաւանի մեծ մասը կազմուած է եղել քիւրդերից։ Ճանապարհին բադկանցի քիւրդերը յարձակւում են կարաւանի վրայ և կողոպտում միմիայն հայերին, տանելով 60 ջորի և ցորենի համար պատրաստած փողը. շէնիկցի հայեր դադարկ ձեռներով վերադառնում են իրենց տները։

Մայիսի մէջ Մուրադի կարգադրութեամբ մի փոքրիկ հայդուկային խումբ, բաղկացած տեղացիներից և օտարականներից յարձակւում է բագրանցի ցեղին պատկանող մի գիւղի վրայ, խլում է 65 ոչխար և առանց մի մարդ կորցնելու վերադառնում է։ Այդ խմբի մէջ են

լինում խասգեղցի Պողոսը, ալէքսանդրապոլցի Սենեքերիմը և վանեցի Կարապետը։

Յուլիս ամսին Կէնճի զայմաղամը գալիս է Իշխանձոր գիւղը հարկ հաւաքելու, բայց ձերբակալում է 3 մարդ իբրև յեղափոխականներ և ստիպում է նրանց յայտնել Մուրադի ու իր ընկերների տեղը, թէ որտեղ են պահւած հայերի թնդանօթները, որտեղ են հայերը զէնք շինում, իսկ գլխաւորապէս՝ որտեղ են պահւած այն 8,000 զինուորները, որոնք ա՛ռել են Ռուսաստանից։ Այս 8 հազար հոգու համար պատմում են մի շատ ծիծաղելի բան։ Որպէս թէ այդ հայերը սահմանի մօտ գտնուող Ղարաղուրուդ ձորից, որտեղից վազում է Արաքսը, ծակել են սարեր-ձորեր ու գետնանցքով դուրս են եկել Մուշ և Ս. Կարապետի անտառներում մնալով 3 օր, այնտեղից մտել են Սասուն ու այժմ պահւում են հայ գիւղերում։ Երբ Իշխանձորի հայերը տեսնում են, որ այդ երեք երիտասարդներին շատ են տանջում, մի անգամ յարձակւում են զայմաղամի վրայ, որն ազատւում է փախչելով, Իշխանձորում թողնելով իր ամբողջ գոյքը։

Զայմաղամի փախչելուց յետոյ նոյն ամսին գալիս են Շէնիկ 200 ասկեար և վրանները խփում մօտակայ մարգագետնի վրայ։ Մի քանի օրից յետոյ զանազան տեղերից լուր է հասնում Սասնոյ հայերին, որ այս տարի կառավարութիւնը մտադիր է սասունցիներին սրի բերան տալ։ Խիան գաւառում գտնուող հայ գիւղերը կամաց կամաց սկսում են դատարկւել։ Ամենից առաջ հեռանում են իշխանձորցիք դէպի Տալորիկ, այրելով իրենց տները. նրանց հետևում են շէնիկցիք, սէմալցիք, ալիանցիք, Գիլիէ-Կուզանցիք։ Իսկ Աղբի և Գլիէմնուր գիւղերը մնում են իրենց տեղերը։ Հենց այդ ժամանակները սասունցոց գուշակութիւնները կատարւեցան. կառավարութիւնն իր զօրքերը քաշեց դէպի Սասուն։ Զբաւականանալով իր 27,000 կանոնաւոր զօրքով, թնդանօթներով, կառավարութիւնը հրաւէր կարդաց Բաղէշի վիլայէթի և նրա շրջականների բոլոր ցեղերին։ Համիտիա աշիրէթները ամեն կողմից սկսեցին կուտակւել Սասնոյ շուրջը։ Հրաւիրում է նոյնպէս հասնանցի Ֆաթէհ-Աղային իր բարբարոսներով։ Սակայն հասնանցիք չեն գնում Սասուն, նրանք իրենց համար արդէն գործելու ասպարէզ ունեն. գարնան սկզբից մինչև աշնան վերջը, մինչև հոկտեմբեր ամիսը նրանք կողոպտում են անխիղճ կերպով Բասենը, Խնուսը, Բուլանըխը, Մանազկերտը, Ալաշկերտը։

Ահա Սասնոյ վրայ գնացող ցեղերի անունները՝ բագկանցիք, Բագրանցիք, ինկանցիք, մամկանցիք, ջիբրանցիք, զուբկցիք, իսնանցիք, սլբքցիկ, զխուրցիք, ուշկոթանցիք և հայդարանցիք։

Այս բոլորի թիւը տաճիկ զինուորների թւի հետ միասին հասնում էր մօտ 45000-ի։

Սասնոյ կուռող հայերից հրացանաձիգներ ընդամենը եղել են 700 հոգի։ Հրացաններն եղել են քիչ բացառութեամբ նախնական շէշխանաներ... Մնացեալ կուռող հայերը զինւած են եղել միմիայն նաջախով, թրով և այլն։ Իսկ Մուրադի մօտ եղել են 7 մարդ օտարականներ, զինւած բերդանկայուլ։ Հայերի մեծ մասը բարձրացած է լինում լեռները, օր. Անտօք, Կէփին, Ֆըռ-Ֆըռ քար։ Սասնոյ պաշարումն սկսւել է յունիս ամսից. կռիւն սկսւել է օգոստոսի սկզբին և վերջացել նոյն ամսի վերջին։

Կռիւն սկսել են Բագրանցիք, սակայն ահագին կոբուստով ստիպւած են եղել յետ քաշւել։ Դորանից յետոյ բոլոր քիւրդ ցեղերը միանգամից յարձակում են գործում և զանազան տեղերից աշխատում են բարձրանալ Դալորիկ և հայերի բռնած լեռները։ Հենց այս ժամանակ սրի ճարակ են լինում Աղբին և Մսուրի հայ գիւղացիք իրենց տների մէջ։ Կոտրւում են նոյնպէս և Բսանաց գաւառի հայերը։ Ոմանք սրի զոհ են գնում, իսկ ոմանք կրակի։ Կռիւը տևում է 19 օր անընդհատ. քրդերի և տաճիկների կողմից մեծ կորուստ է լինում Դալորիկի և լեռների ստորոտներում։ Պատմում են, որ մի հայ նստած է լինում ժայռի ետև 4 պատրօնդաշ կախած վզէն, բոլորն էլ լիք փամփուշտներով. ամեն մի փամփուշտով նա մի տաճիկ է գետին փռել. այս հաշւով նա 200-ից աւել թշնամի է գլորել. դա է սպանել և մի թնդանօթաձիգ։ Երբ փամփուշտները բոլորովին սպառում են, նա բարձրանում, դուրս է գալիս քարի յետևից, նետում հրացանը տաճիկ զօրքերի առաջ և գոռում. „Դուք, անմաքուրնե՛ր, արիք, մօտեցէք. ինչ էք վախենում. խօմ տեսնում էք, հրացան չկայ այլ ևս, մենամենակ խէնչալս է. ձեզնից շատ շատերին պիտի կոտորեմ սըրանով։“ Այս բոլորը պատմում էր մի տաճիկ զինուոր։ „Մենք քառասուն հոգի էինք, ասում էր նա, բայց էլի հազիւ սիրտ արինք յարձակւել վրան և ողջ ողջ բըռնել։ Մեզնից մի քանիսին վիրաւորեց խէնչարով։“

Հայ տղամարդիկ, շարունակում է թիւրք զինուորը, անընդհատ կռւելուց բոլորովին միջոց չէին գտնում հանգստանալու կամ ուտելու։ Հայերը երբեմն երբեմն անօթութիւնից ընկնում էին ուշաթափ։ Սառը ջրով լոգացնում էին նրանց, կերակրում էին մածնով, անաի մնով։ Փաշան երբ տեսնում է, որ կռւելով անհնարին է յաղթել հայերին, դիմում է խորամանկութեան։ Ազատութիւն խոստանալով՝ բերել է տալիս Տալորիկի իշխաններին և քահանային, որպէս զի ներում շնորհէ ամենքին։ Հայերի մի մասը, որ լաւ էր հասկանում նենգաւոր փաշայի դիտաւորութիւնները, թողեց իւր անառիկ դիրքը, փախաւ դէպի զանազան կողմեր։ Միւս մասը կէս խափւած, կէս յուսահատւած անձնատուր եղաւ։ Փաշան հրամայում է կոտորել վերջիններին։ Բոլոր անձնատուր եղողները նահատակւում են ամենաչարաչար մահով։ Մի քանի զինուորներ, որ Բաղէշի հիւանդանոցում պարկած են եղել, պատմում են հետևեալ քստմնելի դէպքը։ Գազան փաշայի հրամանով խոր փոս են փորում, նետում են այնտեղ և սպանւածներին և կենդանի մարդկանց... „Ողջ ողջ թաղում են հայերին... Այրում էին կենդանի մանուկներին և ձողերի վրայ բարձրացնելով՝ գոչում էին. „անխե՛լք հայեր, տեսէք ահա՛, թէ տղամարդիկ է՛ք, արիք փրկեցէք ձեր մանուկներին։“ Եօթը տարեկան մի աղջիկ փախաւ կրակից տեսայ և խղճահարւեցի. փակեցի աչ-

քերս և հեռացայ, դարշելով մեր արած գործերից։ Բայց փաշան հրամայեց նորից կրակի մէջ գցել կիսամեռ աղջկան։"

Մի այլ տեղ զինուորները դազուխի են բարձրացնում մի սիրուն հարսի։ Ցցերից մաս մաս կտրտում են և կտորները հայերին շպրտելով, բղաւում են. „Հայեր բաղցած է՛ք, անօթի, ահաւասիկ ձեր սիրելի կանանց միսը, կերէ՛ք և ոգի առէ՛ք։" Կանանցից շատերը այդ սրտաճմլիկ տեսարանին ներկայ լինելով, իրենց ցած են գլորում ժայռերի բարձրութիւնից։

Ռմբակոծել են Ցալորիկը, այրել են եկեղեցին, 3 հարիւր մարդ մէջը։ Հայերի մեծ մասը փախել է երկրի զանազան կողմերը։ Մի մասը ապաստան է գտել խարզանցի կոչուած քրդերի մէջ, միւս մասը անցնում է դէպի Խուլի, Ջապաղ-Ջուր և Սղերտ։

Կռուից յետոյ զօրքերը մի քանի օր շարունակ շրջում էին լեռներն, անտառները, ապաստանած հայերին կոտորելու համար։ Մուրադին գտնում են մի այրի մէջ բոլորովին ուժասպառ։ Հրացաններից մի երկուսը յաճախ արձակելուց տրաքուել էին։ Պատմում են, որ Մուրադին նախ գտել էին բագրանցի քիւրդերը։ Մուրադի ապաստանը բարձր էր, անմատչելի։ Զափթիաները նախ գալիս են զօրքերի հետ.

„Ցած իջէ՛ք, գոռում են, դիմելով հայերին։"

—Չենք իջնի առանց սանդուխքի, պատասխանում է Մուրադը։ Բերում են գերաններից, տախտակներից սանդուխտ շինում. Մուրադը ցած է իջնում։ Նրա բարակ, քնքոյշ կազմուածքը տեսնելով՝ մի զապտիա հեգնական ժպիտով մօտենում է նրան, ասելով. „Մուրադ, հա՜, Մուրադ. սա է՞ Մուրադը, այս պստլիկ մարմի՞նը։" Մուրադը պատասխանում է. „Ես եմ, այո՛, Մուրադը, բայց ափսոս մուրադիս չհասայ։"

Այդպէս, Մուրադին 22 հոգով բերում են Մուշ իր 4 ընկերներով, փոխադրում են Բաղէշ, իսկ այստեղից Սղերտի վրայով Պոլիս են տանում։

Սասունն ընկճելուց յետոյ քրդերն իրենց իսկական գործը գտան։ Ինչ կար չկար, նրանք հաւաքեցին, տարան։ Մինչև իսկ հանեցին գետնի տակ պահուած թէ եկեղեցիների և թէ կանանց զարդերը։ Իսկ զօրքերն իրենց բօղալի ետևից էին ընկած։

Ժանտախտ հիւանդութիւնը տարածուել էր զօրքի մէջ։ Շատերը հիւանդացել էին իրենց կաւքից դուրս կատարած դժոխային բարբարոսութեանց պատճառաւ։

Սասունցի կնոջ անվեհեր ընդդիմադրութիւնը, նրա օրինակելի անձնազոհութիւնն արդէն խիստ կերպով տպաւորուել է ժողովրդի սրտում։ արդէն հայերի, քրդերի և տաճիկների մէջ պատմում են, որ մի գեղեցիկ կին սպիտակ ձիու վրայ նստած, թուրը ձեռին արշաւելով այս և այն կողմ, տաճիկներին, քրդերին ջարդելով՝ սլանում, մտնում է Ցալորիկի եկեղեցին։

Սասունն ամայի դարձնելուց յետոյ կառավարութիւնը խոստացել էր փախստական հայերին թոյլ տալ վերադառնալ իրենց տները, խոստանալով տալ նրանց 50,000 զրշ. իրենց կրած վնասների փոխարէն։ Բացի այդ՝ կառավարութիւնը խոստացել էր չպահանջել 10 տարուայ հարկը այն պայմանով միայն, որ սասունցիք մի շնորհակալութեան թուղթ ուղարկէին Սուլթանին, որ „Սուլթանը բարեհաճեց կոտորել աւազակ և ապստամբ հայերին"։ Հայերը պատասխանում են. „Ի՞նչ պիտի անենք մեր տուն ու տեղ, երբ չկան այլ ևս մեր սիրելիք"։

Այսօր Մուշ, Բաղէշ, սր. Կարապետ լի են փախստական սասունցիներով, որոնք ապրում են ցիր ու ցան և խղճալի դրութեան մէջ... Սասունցիք իրենց յոյսը դրել են Ռուսաստանի հայերի վրայ, նրացից են սպասում օգնութիւն...

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԽԱՂԵՐԸ.

Սասնոյ կոտորածն աւարտելուց յետոյ կառավարութիւնը ամեն կերպ աշխատեց ձեռները լուալ և յետ կանգնել, ամբողջ մեղքը քրդերի վրայ բարդելով։ Ճիշտ է, որ քրդերն են եղել սկզբից կուռողները Սասնոյ դէմ, ճիշտ է, որ հասնանցիք էին Բասենի, Խնուսի հայերի կողոպտողները. ճիշտ որ շիկակները. մուկրցիք, մլանցիք, շարաֆների, մամայների առաջնորդութեամբ աւերում են Վասպուրականը. բայց ո՞վ է դրանց խրախուսողը, ո՞վ է դրանց զէնք տուողը, եթէ ոչ Սուլթան Համիդը իւր կուսակալ փաշաների միջոցաւ։ Բացի այդ, ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ բացի քրդերից, բացի Համիդիէ դնտերից, Սասնոյ վրայ արշաւել են ահագին քանակութեամբ կանոնաւոր զօրքեր իրենց թնդանօթներով։

Այժմ, երբ ամեն ինչ վերջացած է, երբ Սուլթանն ստիպուած է պատասխան տալ համայն ժողովրդի արդար բողոքին, երբ Եւրոպան պահանջում է խոստացած բարենորոգումները մտցնելու, Սուլթանը սկսել է իւր խաղերը, և տաճիկ սոված պաշտօնեաների համար բացուել է աշխատանքի մի նոր աղբիւր։

Հոկտեմբեր ամսին յանկարծ կառավարութիւնը մի հրաման է արձակում, որ Ալայ բէկը ինքն անձամբ գնայ այն քրդերի վրայ, որոնք աւերել են Սասունը և այլ գաւառներ, յետ առնի հայերից տարած աւարը և վերադարձնի տէրերին։ Ալայ բէկը 200 ձիաւորով նախ գնաց ջիբրացի քրդերի վրայ, բայց քրդերը դիմադրեցին, հրաժարուեցին որ և է բան վերադարձնել և Ալայ բէկը վախենալով կուից, դատարկ ձեռքով վերադարձաւ և դիմեց հասնանցոց վրայ։ Հասնանցիք ոչ մի ընդդիմադրութիւն ցոյց չտուին, յոյսերը դնելով իրենց ցեղապետ Ֆաթէ փաշայի վրայ, որը Սուլթանի աչքում մեծ նշանակութիւն ունի և որի մի խօսքը բաւական է Ալայ բէկին վերադարձնել"։ Բայց հակառակը դուրս եկաւ. Ֆաթին իւր մարդկանցով բռնուեց և բերուեց Խնուս։ Ֆաթէ փաշան երկար չմնաց. նա շուտով ազատուեց, բայց ոչ թէ Սուլթանի շնորհիւ, այլ այն 400 ոսկի կաշառքի, որ նա աւեց Ալայ բէկին։

Բռնուած էր նոյնպէս և Աղամի տղէն։ Դա մի շատ հարուստ քիւրդ է, ունի ահագին ազդեցութիւն և ամեն տարի 10,000 աւել ոչխար է տանում Շամ և Հալէպ ծախելու։ Դա Կարինից հեռագրով բողոքում է Բ. Դուռը՝ յայտնելով, որ ինքն աւազակ չէ, այլ յայտնի

վաճառական. այդ կարող են վկայել և հայերը։ Դա էլ ազատուեց, որովհետև սպառնացել էր կառավարութեան՝ բաց անել դեսպանների առաջ բոլոր գաղտնիքները, ցոյց տալ, որ քրդերն ամեն ինչ կատարել են կառավարութեան դրդմամբ։

Կառավարութեան պաշտօնեաների համար աւելի ձեռնտու էր իրենց ոյժը փորձել համեմատաբար թոյլերի վրայ։ Հոկտեմբերից սկսած մինչև Նոյեմբերի վերջը բաւականաչափ քրդեր բռնուեցան և կողոպտուեցան։ Նրանց մալ, ոչխարներ, ձիաները, ամբողջ հարստութիւնը անցան ագահ պաշտօնեաների ձեռքը։ Մի քանի տեղեր բռնաբարուած կանայք ու կոյս աղջիկներ։ Պատմում են, որ զօրաց անգթութիւններից մի քանիսը դոցանից մեռել են։ Այրուած են բաւականին քրդերի տներ։ Բանն այնտեղ է հասել, որ քիւրդ աղաները պահ են տալիս իրենց հարստութիւնը։ Ես պատահեցի մի երկու տեղ հայի մօտ պահուած քիւրդի հարստութիւն։ Օրինակ Ղ. գիւղում երբ հիւր եղայ մի հայի տան մէջ, ինձ տարան, պահեցին ճիշտ այն դարմանանոցում, ուր պահուած էր քրդի մի սնդուկ ապրանքը։ Նոյնպէս Ի. գիւղում ինձ տեղաւորեցին էլի դարմանոցում, որտեղ տան տիրոջ որդին ցոյց տուեց մի փոքր ոսկով լի արկղ և երեք հրացան իրենց փամփուշտներով։

Այժմ քրդերը սաստիկ գրգռուած են կառաւարութեան դէմ։ Նոքա սպասում են գարնան ամբողջ երկիրը հիմնայատակ անելու։

ՍԱՍՈՒՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵՆԻ ԱՌԱՋ

II

Մայիսի վերջերը Ճիպրանցի քիւրդ աւազակներ Պաղու (Մշոյ-Դաշտ) գիւղի վրայ յարձակում ընելով կը թալանեն։ Մօտակայ գտնուած Զիարէթ գիւղի երիտասարդներէն հաւարի կը հանին, աւազակներէն չորսը կը բռնեն և հրացանները ձեռքերնէն կառնեն. բայց նոյն գիւղացի Թաթօն, որ նեռսէս վարդապետ Խարախանեանցի հակառակորդներէն մին է, հրացանները ետ կը վերադարձունէ քրդաց, որք իրեն ծանօթ բարեկամներ եղած են։ Պաղուցիք ժամանակ մը ցիր ու ցան լինելէ վերջ՝ կրկին վերադարձան իրենց գեղ։

Մայիս 19-ին Սասնոյ Քաշքիկ գեղացի Իպրահամի տղայ Սօֆի Իպրահիմը, գոմըրկերցի Ասուածատուրը կսպանէ, իւր աւելի պահանջած պէշը չտալուն համար։

Մուշէն հայերէն և քրդերէն բաղկացեալ քարվան մը 200 գրաստով, որ Արգին Ֆարգին ցորենի կերթար, Ֆարգին չհասած խէյանցի քրդաց կողմանէ միմիայն կը թալանուին հայերը, իսկ քրդերը ազատ կը թողուին։

Հասանցի 30 ձիաւոր յուլիս 1-ին Հացիկ(Մշոյ-Դաշտի)գեղի վրայ յարձակելով նոյն գեղացի Թօրէ անուն անձի նահապետական մեծահարուստ տունը կը թալանեն։

Յուլիս 3-ին Ախշան գիւղէն ոչխար կը տանին և ոչխարի տէրը կսպանեն։

Յուլիս 20-ին Պոզքցիներու գլխաւոր Զէլէպ անուն քիւրդը Արգկայ Զաքար և Մակար անուն երկու հայերը ճամբան կողոպտելէն վերջ՝ կը շղթայէ և արձակելու համար կը պահանջէ 14 քիսէ ղ., իր այնալին ու դիտակը, զորս անոնց ազան՝ Պարի Խալիլը խլած է ուրիշ ատեն։

Յուլիս 23-ին Յիշեալ ցեղի քրդեր նոյն գեղէն մօտ 200 ոչխար թալան կը վերցուներն և ոչխարաց տիրոջ՝ Օհանի ոտքն ալ կը վիրաւորեն։

Յուլիս 22-ին տղերնիցի(Թէլէքցի)քրդեր Թարուք հայ գեղի բոլոր ոչխարները կը տանին։

Սասունցի Մաքօ Խարչինի տղաքը գիշերով խըտանցի Ըրգոյի տան վրայ յարձակելով՝ կը թալնեն գոյքերը։

Նոյն քրդերը զարիրլուանցի Գամշի տունը թալնելէն ետք՝ անոր երկու տղերքը Թամօն ու Սագօն կը ձերբակալեն և իրենց հետ կը տանեն. բաց թողնելու համար 1200 ղուրուշ, կով մը և էշ մը կը պահանջեն։

Խէյանցի նշանաւոր աւազակապետ Թրմօ Մըհէ անուն քիւրդը տեսնելով որ իշխանորցիք իւր զօգանը գրաւած են, մեծ բազմութեամբ իշխանորցոց խուզերուն վրայ կը յարձակի, բայց ամօթահար ետ կը դառնայ։

Լաճըգանցի չորս քրդեր բանձար հաւաքող շէնքքցի կանանց վրայ կը յարձակին թալնելու։ Քրդան մէկը թրով կը զարնէ Մօսէի տան Շաքէ անուն կնկայ ծնկան. սա հերոսուհին քաջաբար կուելով քրդու ձեռքէն սուրը կը խլէ և գետին պարկեցնելով լաւ մը կը ծեծէ զքիւրդ և սուրը իբրև յաղթական նշան տուն կը տանէ։

Հրութ գիւղէն փախցուած կինը, զոր փախցուցած էին ճելալցի Քեաղմենց Սըլէն, որոյ ձեռքէն խլած էին Շէկոյի տունը, կը մեռնի իւր քաշած չարչարանքէն մինչև որ տուն կը հասնի։

Կէլիէկուզանի մօտ Անտօքայ սարին վրայ քրդու մը դիակը կը գտնուի և կը ներկայացնուի մօտը գտնուած զօրաց, որք կը պատասխանեն թէ՝ „մենք մեր կեանքէն կը վախնանք, ուր մնաց ձերը„։

Հեղին գեղացի Մխօ Վարդանը ձերբակալելէ և կըրիկ գումար մը(մօտ 100 օս. ոսկի)կաշառք ուտելէ վերջն թողուցին։

Մշոյ վաճառականներէն Պտէեան Գասպար աղայի տուն խուզարկելով՝ երկու ռէվոլվէր կը գտնին։ Նորա եղբայրը՝ հաճի Կարապետն էլ ձերբակալեցին և ժամանակէ մը վերջ կը թողուն(ի հարկէ կաշառքով)։ Քանիցս այսպէս բռնել ու թողնե է վերջ, վերջապէս կը ղրկեն Բաղէշ քաւարանէն անցնելու համար։ Այն հարուստները, որք ցարդ 100 փարայ ազգին տուած չուներ, այժմ 200 ոսկին մէկէն կը թափեն շան բերան՝ միայն իրենց անձը ազատելու համար. բայց իրենց սերունդը ազատելու համար տակաւին կը խնայեն։

Շէնքցի Գընէի Ըրգոյի տղան Կարապետը Մուշ քաղաքին մէջ կը ձերբակալեն և չեն թողեր, առարկելով թէ սա սէմալցի ձերբակալեալ ըէս Գորգէի անեռձագն է։ Յիշեալ Գորգէն մատնուած էր իբր յեղափոխական։

Պուլանխայ Քոփ գեղի քահանան և Լիզ գեղի Լեւոն վարժապետը կը ձերբակալուին։

Խնուսէն 60 մարդու ձերբակալման հրաման խրկուած է Կարինէն։ Կը գտնուին տակաւին խել մը անգէտներ,

---

գասը չէ, որ դրանք զբաղուում են նրա վիճակով, բայց յուլիսեան հաւաքագրումներ են, որովհետ-

որք թերահաւատ լինելով հայկական խնդրոյ լուծման մասին, ոչ միայն չեն հաւատար, այլ ընդհակառակը, կաշխատեն խանգարել գործի ուղղութիւնը։ Այդպիսիք ի հարկէ իրաւունք ունին իրենք զիրենք թուրք կառավարութեան բարեկամ կոչելու և անոր բարեկամութեանը վրայ կատարեալ վստահ լինելու։ Ուրախութիւն է ըսել, որ այժմ այդպիսիք ևս կասկածելի կը ներկայանան կառավարութեան առաջ և կը փախին անկէ։ Այդ կարգին են Շատախու Քոփ, Կիրմաւ, Գեղաշէն, Տափրգ, Շուրնամերկ և Ավկարմ գիւղերու ռէսներն ու գլխաւորները, որք այժմ փախստական եղած են։

Մշոյ կառավարութիւնը Մշոյ բոլորտիք գտնուած հայ կասկածելի գեղջանց մասին լիովին ապահով լինելու համար Խէյանցոց, Բագրանցոց, Խարիգանցոց, Բըշկոտցոց և Պատիգանցոց քէօչերը հրաւիրած է, որ գան իրենց զօզանը Մշոյ սարին հաստատեն։ Այդ յիշուած աշիրներու քէօչերն ինչ չարիքներ չեն հասուցած խեղճ դաշտեցոց։ Քէօչերն անցնելու ատեն ճամբու վրայ գըտնուած հայ գիւղացիք քարերու, ժայռերու մէջ կը փախչին վախերնէն։

Յուլիս 10-ին Ալպուհարի կնկտիք գազպին հաւաքելու ատեն պէլէքցի հինգ քրդեր անոնց վրայ կը յարձակին։ Մին այնքան կը ծեծեն, որ 2-3 օր վերջ կը մեռնի և մի ուրիշն ալ ձեռքէն կը վիրաւորեն։

Նոյն ցեղին պատկանող մի քանի ուրիշ քրդեր Օղունայ հայ կին մը փախցնելու կերթան։ Որպէս զի կնիկը իւրացնելու խնդիրը վճռողականապէս վերջացի, կուզեն նախ տան միջի երիկ մարդիկը սպանել և ապա կինը փախցունել, բայց կինը ելեցիութեամբ թէ մարդիկը և թէ ինքզինք կազատէ հետևեալ կերպով։ Կինը քրդաց կըսէ. „չէ որ ես իմ կամքովս ձեր հետ կուգամ և կը թրքանամ, այլ ևս ինչ պէտք է անոնց արիւնը մոնել. միայն թէ ապահով լինելու համար երթանք դատաւորին մօտ և անոր ներկայութեան կարենք քէպին, որպէս զի մի քանի օր ձեր քէֆը լրացնելէ վերջ զիս չթողնէք։“ Քրդեր կը հաւանին և կերթան Քօլոսկայ զաղիին (դատաւորին), որի ներկայութեան կինը կը պոռայ. „ես հայ եմ և զիս բռնի տանել և թրքացնել կուզեն։“ Որքան ալ քրդեր ճնշում բանեցնել կը ճգնեն, բայց սոյն գեղի հայեր քաջութեամբ կը պաշտպանեն և կազատեն կինը։

Յուլիսի 22-ին Մելքոյի Կէլինի քրդերէն Սէլիմի տղաքը բռնութեամբ կը տանեն Արդկունցի Ստեփանի քանի մը հատ ոչխարները։ Այդ քրդերը աւելի անոր համար կատղած են, որ Իշխանձորի դէպքը պատահեցաւ, որովհետև ցարդ հլու և հնազանդ ոչխարագլուխ հայէն այդպիսի յանդգնութիւն չէին սպասեր և հետևաբար կը ջանան կորիւնը խեղդել։ Բայց կորիւնը պիտի դառնայ առիւծ և յօշոտէ զիրենք։

Մշոյ գիւղերու աշարը ծախսելու վրայ է։ Ոչ մի հայ չի համարձակիր միւղայիտէին մօտենալ։ Վաւաշոտ քրդերը կը կուին այն հայ գեղին համար, ուր գեղեցիկ կնիկներ կը գտնուին։ Եթէ քիւրդը ամեն տեսակ հաճոյքները վայելելէ ետքը կրկնապատիկը չվաստկի, չը գներ։ Գիւղի արդիւնաբերութիւնը որքան ալ սուղ լինի, նա իր ուզած քանակութիւնը կը լրացունէ։

Տիգրանակերտի մօտերը բնակող 1000 համիտիէնեռու գլխաւոր հրամանատար Իպրահիմ փաշի տունը կը թալնեն Էնրզ արապները, որոնց վրայ զորք կը քաշվի ասկէ մէկ ու կէս ամիս առաջ։

Յուլիս 24-ին Փսանայ գաւառի 27-30 պանդուխտներ Հալէպէն վերադարձերնուն Պիրմի մօտ Խէյանցու Հուսէյին աղայի տղան՝ Սլօն և իւր հօրեղբայրն իրենց մարդիկներով կը թալնեն և կը տանին 110 մէճիտիէ։ Այդ ողորմելիները չթալնելու և ճամբան ապահով անցնելու համար իրենց առաջնորդ կառնեն երկու քիւրդ, վճարելով 20 մէճ., բայց այդ առաջնորդներն դէպքէն առաջ կծիկը կը դնեն։

—.—

Թիֆլիզից մեզ գրում են, որ այնտեղի եկեղեցիներից մէկում ահագին բազմութեան ներկայութեամբ հոգեհանգիստ է կատարուել Թահսի փաշայի սպանողի համար, որն անմիջապէս վերջ է տուել իր կեանքին։

Նուիրատուութիւնների ցուցակը.—

„Անկելանոց“-ից 62 ռուբ., 96 ռ., 11 ռ. „Կոզաթայից“ 15 ռ., 150 ռ. 70 կ. „Կայծիկից“ 85 ռ. 70կ., 86 ռ. 85 կ., 28 ռ. № 39 Թ. 41 ռ. № 80 Թ. 3ռ. № 111 Թ. 28 ռ. 70 կ. № 73 Թ. 16 ռ. 50 կ. Ա. Մ. Տ.-ից 10 ռ. Կ. պ. ք. Արամից 70 ռ. Գ.Ձ.-ից 150ռ. (Ատ. Հր.) Բ.Թ.-ից 100 ռ.

Խ.-ի ուս. գպպ.-ից 200 ռ. Եապօնացուց 172 ռ. Լակլ. ձեռ.173 ռ.

Օր. Մ. 20 ֆր. Օր. Ե. 30 ֆր. Տիկ. Լ. 10 ֆր.

Վ. քաղաքից Ղարա Մէլիքի միջոցով յօգուտ „Դրօշակի“ տպարանին պ. պ. Մ.Հրանից և Արամից 100 ական ֆր. Բացի այդ՝ պ. Վարդերեսից 100 ֆր. և Ն.-ից 100 ֆր. Մի Բօլգարացուց 50 տաճկ. Հոխայ տառ։

„Արջք օրհասականք հզօրագոյնս կուին։“

Հնչակի նախավերջին համարում ասած է, որ զանազան անձինք գողանում են իր թղթակցութիւնները և սեփական ոսկու տեղ ծախում։ Սրա հետ միասին նա սպառնալիքներ է կարդում, որ ուրիշ բաներ ևս ունի յայտնելու, որ „այլ ևս ուրիշ կերպ կը վարուի“։ Իսկ Հնչակի միմոսական օրգան Ապտակում ամենալկտի կերպով յայտնուում է, որ այդ գողը „Դրօշակն“ է։ Միմոսական լկտիութիւնների պատասխանելու վարկեան անգամ ժամանակ չունենք։ Իսկ „Հնչակին“ մենք ասում ենք, որ դա ամենաստոր ստութիւն ու զրպարտութիւններ են։ Քաջութիւն, ազնուութիւն ունէք, պարզ և փաստերով գրեցէք և այն ժամանակ միայն կստանաք ձեր փաստացի հերքումը։

Մենք սպասում ենք, որ „Հնչակն“ իր խոստացած սպառնալիքները կատարի։ Ցանկալի է սակայն, որ դա ևս չենթարկուի իր վերաբերմամբ մեր արած քննութեան խոստացած պատասխանի օրին։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան և նուիրատուութեան համար դիմել.
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա. Դաշնակցութեան ազատ տպարան